Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-415[2]-25.12.2008-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

<<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության 2005 թվականի օգոստոսի 13-ի ՀՕ- 164- Ն օրենքի (այսուհետ օրենք) 15-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետում <<տևողությունը>> բառը փոխարինել << և հավատարմագրի գործողության ժամկետը>> բառերով:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների մասին

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3
1.ՀՀ կառավարություն	1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասի կապակցությամբ հայտնում ենք, որ Օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի տեքստի իմաստային ամբողջականությունը պահպանելու համար անհրաժեշտ է հանել միայն «և հավատարմագրման» բառերը: 2. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածը չի բխում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի պահանջներից, որոնց համաձայն՝ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ իրավական ակտի գործողությունը դադարեցնող իրավական ակտում տրվում է իրավական ակտի լրիվ անվանումը, իսկ նույն օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի	Առաջարկություններն ընդունվել են, նախագծերը լրամշակվել են:

	վերնագիրը, «Հայաստանի Հանրապետության» բառերը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը (այսուհետ՝ ընդունման օր), թիվը և «օրենք» բառը: Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածին:	